ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր

09.03.2020թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար - Նինա Թադևոսյանը,
Գնահատողներ՝
Աշխատակազմի գլխավոր մասնագետ - Սարգիս Սահակյանը,
Աշխատակազմի առաջատար մասնագետ - Վարդգես Դաբաղյանը,
Գնումները համակարգող՝ Արտյոմ Գևորգյանը:

«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Գևորգյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Գևորգյան)

1.1 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Արջաղբյուր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա.Գևորգյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

-ընթացակարգի հրավերով ապրանքի տեխնիկական բնութագրում սահմանվել է, որ լցավորվող գազի ջերմաստիճանը պետք է լինի 40^{0}C, սակայն «Արջաղբյուր» ՍՊԸ-ի կողմից Հավելված N 1.1-ով /առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշվել է <...լցավորվող գազի ջերմաստիճանը պետք է լինի 400C....> ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

-Միաժամանակ համաձայն հրավերի 2-րդ մասի 2.7 կետի հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«Արջաղբյուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը տնօրենի անունից ստորագրվել են այլ անձի կողմից: Հայտում ներառված լիազորագրում նշված է որ ընկերության տնօրենը լիազորում է Էդիկ Մաիլյանին էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու Մեծամորի համայնքապետարանի կողմից ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/2 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի հրավերում սահմանված հայտում առկա բոլոր փաստաթղթերը....>:

Վերոնշյալ լիազորագրում սխալ է նշվել ընթացակարգի ծածկագիրը:

16.03.2020թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը նույն օրը ծանուցեց մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /17.03.2020թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

«Արջաղբյուր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

2.4 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվում տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր Մասնակիցների առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա.Գևորգյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպություններ					
						անվանումը	գնային առաջարկը				
							ինքնարժեք	շահույթ	ինքնարժեքի և շահույթի հանրագումար	ԱԱՀ-ն	Ընդհանուր գինը
1	սեղմված բնական գազ	կգ	5661	265	1500165	«Արջաղբյուր» ՍՊԸ	1063377.5	186760	1250137.5	250027.5	1500165

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի հետ բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Գևորգյան)

4.1 **18.03.2020թ**. «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա, ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակց ճանաչվեց **«Արջաղբյուր» ՍՊԸ**-ն:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա.Գևորգյան)

5.1 «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա.Գևորգյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Գևորգյան)

7.1 «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-06/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 17:00-ն, **ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1** հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Ն. Թադևոսյան
Գնահատող	_____	Ս. Սահակյան
Գնահատող	_____	Վ. Դաբաղյան
Գնումները համակարգող	_____	Ա. Գևորգյան